ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

07.08.2024 թ

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Գնման գործընթացի արդյունքների վերանայման մասին

1.1 Գնման գործընթացը անգործության փուլում գտնվելու ժամանակահատվածում (23.07.2024թ - 01.08.2024թ ներառյալ) ՀՀ ֆինանսների նախարարությունից 2024թ-ի հուլիսի 24-ին ստացվել է № 03/26-1/15404-2024 գրությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակի հրապարակման վերաբերյալ: Պարզվեց, որ նշված ցուցակում առկա է տեղեկատվություն, ըստ որի «Գոռ-Ման» ՍՊԸ-ի փոխկապակցված անձինք («Մաշխ» ՍՊԸ-ն՝ 25.11.2023 - 25.11.2025թթ ժամանակահատվածում և «ԱվգոմեՇին» ՍՊԸ-ն՝ 12.04.2024 - 12.04.2026 թթ ժամանակահատվածում) գտնվում են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, սակայն «Գոռ-Ման»ՍՊԸ-ն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն, Հավելված 1 դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Ուստի հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 19-րդ ենթակետի պահանջները՝ «Գոռ-Ման» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետը հանձնաժողովը որոշեց վերանայել ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 8.1 կետով ընդունած որոշումը՝ «Գոռ-Ման» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ և մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝

պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հաստատել 7-րդ չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության նոր՝ վերանայված տեքստը և չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.5 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետը, պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Գոռ-Ման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Անահիտ Հակոբյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Լիանա Խառատյան /քարտուղար/